



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2. ԱՐԱՄՅԱՆ

Վ Ա Ր Պ Ե Տ Ը

(Ավետիք Իսահակյանի ծննդյան 78-ամյակի առիթով)



արավոր հարուստ մշակույթի տեր հայ ժողովուրդը մի առանձին իմաստ է դնում «վարպետ» բառի մեջ, իբրև ստեղծագործ շինարար, հմուտ մարդու անուն, որի ձևերով ստեղծվել է ստեղծվում են մեր վեհանիստ, գեղատեսիլ շենքերը, տաճարները, պատմական հուշակապ կոթողները:

«Վարպետ» բառը, որ հասարակ անուն է ինչպես մեր, այնպես և աշխարհի բոլոր լեզուներում, այժմ մեզանում դարձել է հատուկ գոյական անուն այն մարդու, որն իր տաղանդի մեծ ուժով կերտել է հայ ժողովրդի անվերազարձ անցյալի «երգերն ու վերքերը», նրա իղձերն ու ցանկությունները, ինչպես և նոր Հայրենիքի վեհությունն ու երջանիկ առօրյան արտացոլող ստեղծագործությունները:

Առօրյա խոսակցությունների մեջ, Ավետիք Իսահակյան անուն-ազգանվան հետ համահավասար, «Վարպետ» կոչումը գործ էածվում որպես այդ անուն-ազգանվան համահիշ:

«Վարպետի նոր բանաստեղծությունը կարգացի՞ր»:

«Վարպետը եկել էր համերգի»:

«Վարպետին տեսա՞ք այսօր»:

Այսպես են ասում մարդիկ, և բոլորն աչք բառով հասկանում են՝ «Ավետիք Իսահակյան»:

Մեր բանաստեղծների նահապետի վայելած անասման ժողովրդականության ամենացայտուն արտահայտությունն է այս:

Վարպետի վայելած այս համատարած սիրտ և հարգանքի, մեր գրականության և ողջ մշակույթի պատմության մեջ ցարգ շտեմբոված այս ժողովրդականության առկայությունը մեր Հայրենիքում՝ ես տեսել, զգացել, համարյա շոշափել էի դեռ ավելի քան ութ տարի առաջ՝ 1945 թվականի ամառնամուտին, երբ ժամանակավորապես եկել էի Հայրենիք ազգային-եկեղեցական համագումարի կապակցությամբ: Եվ այդ՝ մեկն էր այն բազմաթիվ պայծառ երևույթներից, որ տեսնում էինք մեր նորաստեղծյալ Հայրենիքի երկրում, մեկն այն երևույթներից, որ խիստով ու խանդավառությամբ էին լցնում իմ սիրտը:

Հունիսյան արևաշող մի առավոտ ավտոբուսով մեկնում էինք մեր մայրաքաղաքից էջմիածին: Սիրտս արտակարգ խոտվոյի և ցնծության մեջ էր — այդ օրն առաջին անգամ պիտի տեսնեի Վարպետին...:

Երևան — էջմիածին ամբողջ ճանապարհին սրտիս հետ միտքս էլ զբաղված էր Վարպետով: Փորձում էի ինքս ինձ գանել, վերլուծել նրա ժողովրդականության բոլոր պատճառները: Կողքիս նստել էր Աշուղ Զիվանու որդին՝ հայտնի գրականագետ-բանասեր Քարեգին Առնյանը, որի հետ նախօրը օրը ծանոթացել էինք հյուրանոցում:

— Ի՞նչն է, Չեր կարծիքով, Վարպետի ժողովրդականության գաղտնիքը, — հարցրի սիրելի գրականագետին:

— Վարպետի ժողովրդականության ակնադրյուրը՝ իր ժողովրդայնությունն է, — պատասխանեց Առնյանը լակոնաբար:

«Կա՛վ է ասված, սեղմ և արտահայտիչ,— մտածեցի ես,— բայց լրիվ բացատրություն չէ, չի լիացնում միտքը, չի բավարարում»։
 Հետո տարվեցի Արարատյան դաշտի շքեղանքով, տարվեցի կապույտ, վճիտ երկնքի մեջ իր ադամանդափայլ բաշը մխրճած Մա-

Արագածի զմրուխտ կանաչի ու ծաղիկների հետ... Կարծես բնությունն ինքն էլ է ոգել այդ երգերը։

Վաղո՛ւց անցած-գնացած մանկության խորքերից, ինչպես անմոռաց հուշ, մտքիս մեջ վերհանել էին Վարպետի գրչից տող-



Վ ա ր պ ե տ ր

սիսի մագնիսող տեսարանով ու մի պահ կարծես մոռացա ինձ հուզող հարցը, մոռացա Վարպետին...։ Բայց մի բուպե հետո շրթունքներս մրմնջում էին Վարպետի սըրտապարար երգերը։ Ինչքա՛ն կապված են դրանք Հայրենիքի, Նրա դյուրիչ բնապատկերի, մարդկանց, վեհափառ Մասիսի, պերճ

ված ջերմ, սրտահույզ բառերը ու շարահարվում էին մտքիս մեջ, գալիս էին շուրթերիս՝ որպես մրմունջ։

Մտքումս դրոշմվել, սրտումս պահվել-պահպանվել, էին Վարպետի բանաստեղծությունները, արձակ էջերը, մանկությանս և առաջին պատանությունս տարիներից՝ ընդ

ոչ շատ օրեր առաջ առաջին անգամ տեսել էի մեր Մայր Արարքը, գնացքի լուսամուտի առաջ, սրտատրոսի և ակնապիշ դիտելով գեւոր, շշնջացել էի, Վարպետի բառերով:

«Մեր սարերեն, մո՛ւթ ձորերեն
Ուո՛ր-մոլո՛ր կերթաս, Արա՛ղ.
Ա՛յ սարեր, շա՛ն սարեր,
Ալմաստի՛ սարեր...»:

Ավտորուսը ընթանում էր դանդաղ, որպեսզի արտասահմանյան «հչուրերը» կարողանային երկար վայելել հայրենի տեսարանները:

«Արտասահմանյան հչուրե՛ր», այդ մե՛նք էինք... Հեռավոր դարերի «անխույզ խորություններից» եկող և տարիների ընթացքում կրոնականի, նախադասականի, Բաֆֆու, Հովհաննիսյանի, Քումանյանի, Իսահակյանի և շատ այլոց արվեստի շուրջը իմ արտում ստեղծված հմայքը, ներկա Հայաստանի շքեղափայլ ու ոգևորիչ պատկերի առաջ բորբոքված իմ հայրենասիրությունը ընդլզում է այդ որակումի դեմ...: Ես՝ «արտասահմանյան հչու՛ր» իմ սիրելի, իմ հարազատ Հայրենիքում: Որոշում էի Հայրենիքիս մշտական բնակիչ ու քաղաքացի դառնալ: Տենց որ հնարավոր լիներ:

Անհագ հայացքով դիտում էի զույգ Մասիսները, այնինչ շրթունքներս շարունակում էին մրմնջալ հնօրյա դասադրերից մտքումս և սրտումս մնացած ուրիշ տողեր՝ Վարպետի վեհմական քնարից.

«...Մութ անտառում լուս ման կուզամ,
Ցողը կը շաղէ ծառերեն.
— «Ա՛յ, խեղճ տըղա, վերքըդ խորն է,
Վըրադ կուզանք...»:— Ինձ կրսեն...»:

Ինչքա՛ն պարզ, ինչքա՛ն ջիւղ ու անմիջական էին այս տողերը և ինչպի՛ն համապատասխանում էին զարդի և աքսորի ճանապարհներից նոր վերադարձած պատանւակի իմ թախծալից տրամադրություններին:

«Վարպետի ժողովրդականության ակնադրյուրը չուրաքանչյուր հայի էության մեջ է»,— եզրակացրի ես՝ դեռ առանց հրաժարվելու լրիվ բացատրություն օրոնելու և գտնելու նպատակադրումից...:

Վեհարանի դահլիճում Գարեգին Առնշանը ծանոթացրեց ինձ Վարպետին:

— Մենք տրդեն ծանոթներ ենք,— ասացի նա:

Վարպետը կիտեց թավ ու բարձրադիր հոնքերը, կիտեց աչքերը և ուշադիր նայեց ինձ.

— Ե՛րբ ենք հանդիպել միմյանց,— հարցրեց Վարպետը իր հաճելի բարիտոնով,— չեմ հիշում...:

— Քսանհիճգ տարի առաջ,— պատասխանեցի լրջությամբ:

— Ա՛յն ժամանակ դուք երեխա պիտի լինեիր, չեմ կարող հիշել: Ո՛ր երկրում ենք հանդիպել...:

— Իմ դասագրքերում,— ասացի ես զգացված:

Վարպետը ժպտաց հայրաբար, անհուն քաղցրությամբ:



Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը ճանաչող և խորապես սիրող մարդուն մտածել են տալիս այն խոսքերը, թե իր քնարը միալար է, ունի միայն մեկ հատիկ լար՝ սիրո լարը...:

«...Ես վեր ելա ողի առած՝

Չարկի սրտիս լարերին.

Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց—

Եվ լարերը խզվեցին...»:

— Միայն սիրո լարը մնաց

Սրտիս անհուն խորքերում:

Ու վառ սիրո երգը շողաց

Կյանքիս ամեն ծալքերում...»:

Ծանոթանալով Վարպետի ամբողջ ստեղծագործությանը, նկատվում է, որ այդ սերն էլ հենց նրա «ամբողջ քնարն» է, որովհետև Վարպետի մոտ «սեր» ըմբռնումը համալսապարփակ է, սիրո զգացումը ընդգրկում է ամբողջ մարդկությունը՝ իր բոլոր հույզերով ու խոհերով, բովանդակ տիեզերքը իր բոլոր երևույթներով: Ոչ ոք այնքան ջերմ ու անմիջական տաղերով չի երգել մայրական սերը, սերը դեպի կին էակը, սերը դեպի ընկեր մարդը, սերը դեպի ծննդավայրը, դեպի Հայրենիքը, սերը դեպի բնությունը, սերը դեպի ամեն շնչող և անշունչ էակ և իր, որ կա աշխարհում՝ փոքրից մինչև մեծը: Վարպետի մոտ սերը հետո է սահմանափակ լինելուց, տիեզերական ընդգրկում ունի: Այնքան սրտատու, մտերմիկ բառերով իր մոտ մտ դարը լացող, այնքան նեղ անձնական զգացմամբ իր «Շուշան»ին սիրո քաղցր խոսքի շշնջացող բանաստեղծը կարողանում է նաև, խորատկելով բոլոր սահմանները, թևածել տիեզերական անհունությունների մեջ:

Փոքրիկ տաղերով, փոքրիկ տաղերով սիրող, քնքուշ զգացումներով բարին, ազնիվն ու գեղեցիկը գուրգուրող բանաստեղծը գիտն նաև ատելության բուռն խոսքերով, բուցավառ «սուրահնիք»ով մտրակիկ մարդկությունը տառապեցնող բուռնականներին, ծառանալ կեղեքումներին, կեղծիքի և կապանքների դեմ-հանդիման, յայնաթափալ («Արու-

լայա-Մահարի»): Այդտեղ էլ ատելության փոթորկաշունչ շառաչումի միջից վերջին «աշվով սե՛րն է պոռթկում» անհուն տերը դեպի ազատութունը, սերը դեպի «արևը», որն այդ պոռթում ունի առանձին, խորհրդավոր իմաստ՝ մարդարեաշունչ բանաստեղծի պայծառատեսությունը ընկալված, ըմբռնված...:

Քնքուշ, մտերմաշունչ լիրիկը, որպիսին է Վարպետը, ուժ ունի դառնալու նաև հզոր դյուցազններգակ՝ ինչպես «Սասնա Մհեր» պոեմում: «Ռամիկ», հասարակ աշխատավոր ժողովրդի հանդեպ իր անսահման սիրո ամենացայտուն արտահայտություններից մեկն է այս էպոպեան՝ նորից սեր, նորից «սիրո լայր», միշտ նա...:

Ինչ էլ ստեղծագործի Վարպետը (և ի՞նչ չի գրել նա՝ բանաստեղծություն, լեզունդ, առակ, հեքիաթ, պատմվածք, վեպ՝ շափածո թե արձակ), միշտ և շարունակ ի մտի ունի ո՛չ թե ընթերցողների մի առանձին խավ, այլ նախ և առաջ՝ իր այնքան սիրած ժողովուրդը: Իր բանաստեղծությունների մի էական մասը գրել է նա այնպես, ինչպես հասարակ ժողովուրդն է բանահյուսում, ժողովրդական բառամթերքով, ասելաձևերով, պատկերներով, ժողովրդական համ ու հոտով: Ժողովրդական մոտիվներով գրված իր տաղերը, որոնցից շատերը հրգի են վեր ածված և երգվում են ժողովրդի կողմից, հասկանալի են և սրտագրավ յուրաքանչյուր հայի համար: Ասես ժողովրդի ծոցից դուրս ելած մի գուսան է խոսում կամ երգում:

Վարպետի ստեղծագործություններն այնքան սրտաբուխ են, այնքան անմիջական, այնքան ջերմ ու վարակիչ, որ անգիր անեղու հատուկ ճիգ գործադրես թե ոչ, անպայման մնում են հիշողությանդ մեջ կա՛մ ամբողջապես, լրիվ, կա՛մ էլ՝ գեթ իրենց բնորոշ համ ու բույրով, իրենց սխիժով: Նրա գործերից մի բան մնում է հիշողությանդ մեջ, ընդմիշտ կառչում նրան, կազմում քո խոր էություն մի մասը:

«Անտուն թռչնակս, իմ խեղձ, տխուր երգ,
Դու իզուր թուար իմ սիրող սրտես.
Գլուխ դնելու մեկ տեղ դու երբեք,
Գիտեմ, չես դտնի, ինչքան
Թափառես...»:

Այսպիսի տաղով դիմում է Վարպետն իր սեփական բանաստեղծություններին, 1902 թվականներին, երբ դեռևս չգիտեր, թե ի՞նչ ճակատագիր է վերապահված իր ստեղծագործություններին:

Այժմ, հիսուն տարի անց, ամեն մարդ դիտե, Վարպետն ինքն էլ դիտե, որ նրա բանաստեղծությունները, նրա ստեղծագոր-

ծություններն ընդհանրապես գտել են «գլուխ դնելու» քերձ, հաստատուն տեղ՝ հայ ժողովրդի սիրտը:



Վարպետին սիրում են բոլորը՝ մտավորականությունն ու դյուցազին, բանվորն ու ծառայողը, տարեցներն ու երիտասարդները, պատանիներն ու մանուկները:

Առաջին հերթին հիշենք Վարպետի կրթությանը գրչեղբայրներին, որոնք անսահման սեր ունեն դեպի իրենց նահապետը, որ իրենց նախագահն է երկար տարիներից ի վեր: Սովետահայ բանաստեղծներից ամենակարկառուն ու հեղինակավորը՝ Նախը Զարյանը, Վարպետի ծննդյան յոթնասուներեքամյակի կապակցությամբ շարադրված և «Հայ ժողովրդի ամենասիրված բանաստեղծը, Հայրենիքի, ազատության և սիրո երգիչը» վերնագրված իր հոդվածում Վարպետի մասին ասում է, թե նա «հայ ժողովրդի ամենասիրված բանաստեղծն է», որ «Բուհահայտանը մեծ բանաստեղծ է: Հայ գրականության լեռնաշխարհում նա մեկն է այն գաղափարներից, որոնք կնքված են հավերժական ձյունով: Նարեկացի, Քուչակ, Ոսկաթ-նովյա, Արուսյան, Թումանյան — այս լեռնապարի հսկաներից է Ավետիք Իսահայանը»: Վարպետին շատ են սիրում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իր պաշտոնակիցները՝ ակադեմիկոսներն ու պրոֆեսորները:

Վարպետին շատ են սիրել ու սիրում մեր հին ու նոր երաժիշտները, որոնք հիացել են նրա երաժշտական, պարզ ու սրտագրավ բանաստեղծություններով, որոնցից 80-ից ավելին վերածել են երգի: Վարպետի լիրիկական բանաստեղծությունների տեքստերի վրա եղանակներ հորինած մեր կոմպոզիտորներից հիշենք Գ. Արուստամյանին, Ա. Տիրապետյանին, Ս. Մելիքյանին, Գ. Սյունուն, Հ. Ստեփանյանին, Ազատ Մանուկյանին, Մ. Միրզոյանին, Տ. Ավետիսյանին, Այաջանին, Վ. Տալյանին, Դ. Ղազարյանին և մի տասնյակ ուրիշների, որոնցից մի քանիսը՝ ինչպես Ալեմշահը, Օ. Պերպերյանը, Շ. Պերպերյանը՝ արտասահմանյան երաժիշտներ են: Ինչքան մեզ հայտնի է, ուրիշ ո՛չ մի հայ բանաստեղծի այդքան մեծ թվով բանաստեղծություններ երգ չեն դարձած:

Վարպետը սիրելի է նաև մեր կերպարվեստագետներին, որոնք գործվանքով վրձինել են նրա նկարը կամ քանդակել նրա անդրին: Հիշենք Մարտիրոս Սարյանին, որ Վարպետին նկարել է երեք անգամ, Փանոս Թերլեմեզյանին, Միշա Նալբանդյանին, Ախիկյանին, որոնք նույնպես հորինել են Վարպետի դիմանկարները: Քանդակագործ-

նեքից հիշենք Սուրեն Ստեփանյանին, Ուրարտունին, Քեփենյանին: Իհարկե, դեռ լրիվ չէ այս ցուցակը:

Մեր կերպարվեստագետները նկարում են ոչ միայն իրեն՝ Վարպետին, այլև հորինում են նրա ստեղծագործություններից ներշնչված գործեր, իլյուստրացիաներ: Վերջերս բացված գեղարվեստական ցուցահանդեսում մենք հանդիպեցինք երիտասարդ նկարիչ Սուրեն Մուրադյանի «Սաադիի վերջին դարունը» և «Դարիբալդիականը» անունով նկարները, որոնց համար նյութ են ծառայել Վարպետի նույն վերնադրերով արձակ գործերը:

Հիանալի է, որ Վարպետն անշարի ժողովրդականություն է վայելում բոլոր բնագավառների մեր մտավորականների մոտ, րայց ավելի հիանալին այն է, որ ժողովրդականությունը ընդգրկում է բուն իսկ ժողովրդին, շարքային աշխատավորին:

Մի կապակցությամբ, երբ ես խոսում էի Վարպետի հետ այն մասին, թե ինչքան լայն տարածում ունի նրա ստեղծագործությունը ժողովրդական լայն խավերի շրջանում, նա նկատեց.

— Այդ բոլորը գալիս է մեր դպրոցներից. մեր ամենահամեստ աշխատավորներն իսկ ձրի, պարտադիր և ընդհանուր կրթության սկզբունքի կիրառումով, գրող-կարգացու են, անվազն տարրական դպրոց տեսած. շատերը յոթնամյա դպրոց են ավարտել. կան նրանց մեջ մինչև իսկ այնպիսիները, որոնք լրիվ միջնակարգ դպրոցի շրջանավարտ են. իզուր չէ, որ պետական ժողովուրդ ենք, իզուր չէ, որ մեր երկիրը պատած է հարյուրավոր յոթնամյա և միջնակարգ դպրոցների ցանցով: Դպրոցներում, ապագա ինտելիգենտների շարքում, ապագա բանվորներն ու արհեստավորները նույնպես սովորում են հայ գրողների մասին, ի միջի այլոց և՛ իմ մասին: Սովորում են կարյալ, հասկանալ և սիրել հայ գրողներին:

Հայ դպրոցի հիշատակումը Վարպետի կողմից՝ որպես ազգակ հայ գրողների ստեղծագործության ճանաչողության, որպես նրանց գործերի և անձերի ժողովրդականացման օջախ՝ վերարժանեց իմ մեջ վաղուցվա մի ցանկություն՝ լինել Վարպետի անունը կրող լրիվ միջնակարգ դպրոցում, տեսնել, թե ինչպես է սովորում մեր մատաղ սերունդը, ինչպես է կապված Վարպետի և նրա ստեղծագործությունների հետ: Ցանկությունս հայտնեցի մեր սիրելի բանաստեղծին, որ ասաց.

— Մի օր կգնանք միասին. ես մեկ-մեկ այցելում եմ, բայց այս վերջին ամիսներին

չեմ գնացել: Այս օրերս հանդիպիր, կամ զանգ տուր, պայմանավորվենք, գնա՛նք:

— Վարպետ ջան, գնանք հենց հիմա:

— Մի բան կա—Ջեղ, հավանաբար, հետաքրքրում է հայոց գրականության դասը, այնպես չէ՛: Ջանգ տանք, տեսնենք, թե այսօր հայոց գրականության դաս կա՞ և որ ժամին:

— Ավելի լավ է, որ գնանք առանց նախապես ազդարարելու, անակնկալ:

Վարպետը համաձայնվեց:

Քառորդ ժամ հետո, Վարպետի ավտոմեքենան կանգնեց Երևանի կայարանի հրապարակում, որի վրա է Ավետիք Իսահակյանի անվան իգական միջնակարգ դպրոցի գեղակառույց, ընդարձակ շենքը:

Դալարիքի և ծաղկանոցների միջև առջանում էլիք դեպի դպրոցը: Դասամիջոց էր (Սփյուռքի ընթերցողներին ավելի հասկանալի բառով՝ գրոսանք): Չնովից մեզ հասնում էր մասնկահասակ դպրոցական զաջիկների թռչնային ճովողությունը, որոնք վաղվում էին կամ խումբ-խումբ հանդարտ գրոսնում ընդարձակ բակում: Մտանք գլխավոր դարբասից ներս: Երբ աշակերտուհիները նկատեցին Վարպետին, բոպեաբար թողնելով իրենց խաղերն ու զրոսանքը, ցնծագին ճիշերով ձայն տվեցին միմյանց.

— Վարպետն է... Վարպետն եկավ... Վարպետ...:

Իրենց՝ դպրոցականի մուգ-սրճագույն գեղեցիկ համազգեստների մեջ, որոնց վրա զվարթության շեշտ էին դնում պիոներական կարմիր վզկապները, մատաղերամ բազմությունը խունվեց Վարպետի շուրջը. երանելի ժպիտներով բարևում էին, ցնծում, թուրում...:

Բայց հանկարծ մեկ ակնթարթում մեր շրջապատն ամայացավ. բոլորը վազում էին շենքից ներս՝ թեև զանգը չէր տված... Երբ մենք էլ երեսաների ետևից մուտք գործեցինք շենքը, պարզվեց այդ շտապ անհետացման պատճառը: Կարմիր վզկապավոր շարածճիները երկու շարքով շարվել էին մուտքի մոտ և երկրորդ հարկ տանող մոտեմնետայ սանդուղքների վրա: Երբ Վարպետն անցնում էր նրանց միջով, երկրորդ հարկ բարձրանալու համար՝

— Երկա՛ր ապրի մեր սիրելի Վարպետը, ուտա՛,— գոչեց տասնչորս տարեկան մի պիոներուհի:

— Ուտա՛,— ձայնակցեցին բոլորը միահամուռ: Եվ թնդացին ծափեր:

Մանկահասակ աշակերտուհիների սիրո և հարգանքի յուրահատուկ ցույց էր՝ անմիջական և ջերմ:

Խոր մտորումների մեջ եմ ընկզմվում ես՝ մինչև ավտոն մեզ Միկոյան և ապա Ստալինյան պողոտաներով վերադարձնում է Բաղրամյան պողոտան, որի մոտ է պետության կողմից Վարպետին նվիրված շքեղ վիլան...: Մտորումներից մերթ ընդ մերթ սթափեցնում է ինձ Վարպետը՝ մատնանիշ անելով մի հոյակապ նորակառույց այդ պողոտաներից մեկն ու մեկում, մատնանիշ է անում հպարտությանը, հրճվալից: Շիրակի այս պանծալի որդին, Անի քաղաքի այս վաղնիսի և մոլեռանդ հիացողը, հայ ճարտարապետության և հայ ճարտարապետների այս հիասքանչ երգիչը անզուսպ հրճվանքով է լցվում, երբ տեսնում է հայ ազգային ճարտարապետության ոճով և նորագույն տեխնիկայով ամեն օր շքեղ ու պերճափայլ դարձող մեր մայրաքաղաքի նորանոր նվաճումները:

— Ահա, թե ի՞նչ է նշանակում սեփական պետություն ունենալ, — ասում է Վարպետը:

Մտնում ենք Վարպետի գրադարանը, որը միաժամանակ իր աշխատասենյակն է, ընդարձակ, ճոխ, մեծ բանաստեղծին և քաղմահմուտ ակադեմիկոսին վայել: Միասին նայում ենք սովետական շրջանում նրա հրատարակած գործերը: 1930 թվականին լույս է տեսել, Երևանում, Վարպետի «Բանաստեղծություններ» վերնագրված ժողովածուն, 5.000 տպաքանակով (տիրաժողով), 2 հատոր: 1950—1951 թվականներին Երևանում լույս ընծայվեց «Երկերի ժողովածուն», 5.000 տպաքանակով, 4 հատոր: Հիշենք և Մոսկվայում հրատարակված «Ջնտիր երկերը», 1 հատոր, 6.000 տպաքանակով, Ն. Զարյանի առաջաբանով:

Այս գործերը ո՛չ միայն զարգարում են հազարավոր անհատական գրադարաններ, այլև գտնվում են հանրային գրադարաններում, որոնց ցանցով նույնպես ծածկվել է մեր երկիրը՝ շնորհիվ մեր պետության: Այդ գրադարանները Վարպետի ժողովածուները մատչելի են դարձնում տասնյակ հազարավոր ընթերցողների և՛ քաղաքներում և՛ գյուղերում:

— Նախասովետական շրջանում, և այժմ էլ Սփյուռքում 5.000 կամ 6.000 տպաքանակը հայ գրողի համար երա՛զ էր և է, — նկատում եմ ես:

— Ծիշտ է: Իմ ժողովածուները փոքր հատորներով, լույս էին տեսնում 1.000 կամ առ առավելն 2.000 օրինակով: Մեր սքանչելի Սայաթ-Նովայի բանաստեղծությունների ժողովածուն առաջին անգամ լույս է ընծայվել Գեորգ Լախվերդյանի նախաձեռնու-

թյամբ, 1852 թվականին, միայն 500 օրինակով: Մինչև ինստանական թվականների սկիզբը դեռ կարելի էր այդ գրքուկից ճարել Կովկասի հայ գրավաճառների մոտ: ամբողջ 50 տարի 500 օրինակը դեռ չէր սպառվել...: Քիչ էր հայ դպրոցների թիվը: Հայ գրողը դժբախտ էր ամեն տեսակետով: Չունենիք պետություն, չունեինք հոգացող:

Պետության հոգատարությունը 1940 թվականին նշվեց Վարպետի ծննդյան 65-ամյա հոբելյանը, 1945 թվականին՝ 70-ամյակը, 1950 թվականին՝ 75-ամյակը, որոնց արձագանքեցին նաև Մոսկվան և մյուս եղբայրական սեպուրիկաները: Վարպետն արժանացավ Լենինի շքանշանին, որ Սովետական Միության բարձրագույն շքանշանն է, արժանացավ Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչման (առաջին աստիճանի, 100.000 ռուբլու պարգևով):

Հայ ժողովրդի սիրելի բանաստեղծը սիրելի է նույնպես Սովետական Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելոռուսիայում, Վրաստանում, Ադրբեջանում, որոնց ժողովուրդների, ինչպես նաև սովետական մի շարք ուրիշ ժողովուրդների լեզուներով թարգմանված և ժողովրդականացված են իր ստեղծագործությունները:

Ռուսները միշտ սիրել են Վարպետի ստեղծագործությունները, բարձր գնահատել այս մեծաքանքար բանաստեղծին: Դեռ 1916 թվականին ռուս հայտնի բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը Ավետիք Իսահակյանի մասին գրել է. «Գուցե այդպիսի պայծառ ու անմիջական բանաստեղծ հիմա ամբողջ Եվրոպայում չկա»: Նույն թվականին, աշխարհահռչակ ռուս կոմպոզիտոր Ռախմանինովը եղանակ է հորինել Վարպետի ռուսերենի թարգմանված «Ամեն գիշեր իմ պարտիզոնում» նրբի համար: Ռուս կոմպոզիտորներ Իվանովն ու Ցեզար Գիլը նույնպես երգի են վերածել Վարպետի ստեղծագործություններից մի քանիսը:

Այն գրողը, այն արվեստագետը, որը հարգատ է իր ժողովրդին, որ իսկական թարգմանն է իր ժողովրդի հոգուն, — և այդպիսին է մեր Վարպետը, — հեղինակություն է նաև ուրիշ ժողովուրդների մոտ: Նրա բանաստեղծությունները, բացի ռուսերենից և վերը հիշված լեզուներից, թարգմանված են նաև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն լեզուներով: Մեծ բանաստեղծի «Աբու-Լալա Մահարի» համաշխարհային արձագանք է ստացել՝ թարգմանված լինելով ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, չեխերեն, հունարեն, վրացերեն, ադրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, յապոներեն լեզուներով:



Մերովյունն ընդհանրապես բազդատվում է ձմռան հետ, ներկայացվում է ձմռան պատկերով: Մեր ծերունագարդ բանաստեղծը ավելի նման է աշնան, Արարատյան դաշտի պայծառ, դալար, պտղառատ և երկարատև աշնան:

Նա լրացրեց իր յոթանասունութերորդ տարին, բայց երիտասարդական եռանդով մասնակցում է մեր գրական-հասարակական կյանքին:

Նա մեր Գերագույն Սովետի ղեկավարատ է, մեր Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Հայաստանի սովետական գրողնե-

րի միության նախագահ, և գործուն մասնակցություն ունի այդ օրգանների հաստատակական, գիտական և գրական աշխատանքներին: Նախագահում է հանդեսների, կուլյթներ է ունենում, ղեկուցումներ կարգում, առաջարկներ գրում կլասիկ թարգմանությունների համար, խմբագրում հայ կլասիկների գործեր և շարունակում է ստեղծագործել: 75 տարեկան էր արդեն, երբ գրեց իր ամենաերևելի գործերից մեկը՝ «Հայ ժողովրդի նամակը»:

Հայ պետության հոգատարությունը, հայ ժողովրդի սերն ու զուրգուրանքը երիտասարդ ու կենսառոգջ են պահում մեր սիրելի վարպետին:

